«ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՏԴ 377
DOI: 10.56246/18294480-2025.18-28

ՄԱՐՈՆՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ դասախոս
էլհասցե՝ maronyanhr@gmail.com

Ժամանակակից աշխարհում հագուստի մոդելավորողների նոր սերունդը համատեղում է նորաձևության ավանդական և ժամանակակից տարրերը՝ ձևավորելով միջմշակութային հաղորդակցության և երկխոսության կարևոր հարթակ: Այդ գործընթացը նպաստում է մասնագիտության զարգացման նոր հնարավորությունների ստեղծմանը՝ ապահովելով սոցիալ-մշակութային գործունեության արդյունավետ պայմաններ:

Սոցիալ-մշակութային գործընթացում հատուկ նշանակություն է ձեռք բերում գոյություն ունեցող ավանդույթների զարգացման, կուտակման և պահպանման հաջողությունը:

Սա մանկավարժության կարևորագույն պայմաններից մեկն է: Սոցիալ-մշակութային գործունեությունը ենթադրում է ավագ սերունդներից կրտսերներին փոխանցելու, պահպանելու գործընթացներ:

Մշակույթի փոխանցման ընթացքը ենթադրում է անձի մեջ ստեղծագործական սկզբի ձևավորում, որը կապահովի նրա կենսագործունեության արգասավոր կողմերը: «Սոցիալական մշակույթ» հասկացությունը նշանակում է այն ամենը, ինչը ստեղծված է մարդու աշխատանքով, այսինքն՝ գործիքներ ու մեքենաներ, տեխնիկական միջոցներ և գիտական հայտնագործություններ, գրական հուշարձաններ, կրոնական համակարգեր, քաղաքական տեսություններ, իրավական ու բարոյական նորմեր:

Սոցիալ-մշակութային գործունեությունը սկզբնապես կապված է մարդկային գործունեության հետ և բացատրվում է նրանով, որ մարդը միշտ ձգտել է փնտրել իր կյանքի իմաստը, գործունեության իմաստը:

Սույն հոդվածը նվիրված է «Հագուստի մոդելավորում» մասնագիտության առանձնահատկությունների բացահայտմանը՝ ուսումնասիրելով դրա զարգացման մանկավարժական և սոցիալ-մշակութային պայմանները: Հոդվածի նպատակն է ներկայացնել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ավանդական և ժամանակակից տարրերը՝ որպես միջմշակութային հաղորդակցության և սերունդների երկխոսության հարթակ:

Բանալի բառեր՝ *մոդելավորում, նորաձևություն, սոցիալ-մշակութային պայմաններ, մանկավարժություն, հագուստի պատմություն, մշակույթ, գործվածք, տարազ:*

Հետազոտության արդիականությունը: «Հագուստի մոդելավորում» մասնագիտության դասավանդման գործընթացում կիրառվում են տարբեր տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք խթանում են սովորողների իմացական ակտիվությունը, ճանաչողական ունակությունների զարգացումը և ինքնազարգացման հմտությունների ձևավորումը:

Ժամանակակից կրթական միջավայրում «Հագուստի մոդելավորում» դասընթացի արդյունավետ կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի՝

- գեղարվեստական նախագծման տեսական և գործնական գիտելիքների ինտեգրված ուսուցումը,
- նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը,
- բարձրորակ մասնագիտական պատրաստվածության ապահովումը,
- պրակտիկայի կազմակերպումը ժամանակակից նորաձևության ինդուստրիայի պահանջներին համապատասխան:

Հոդվածի շրջանակներում

1. բացահայտվում են «Հագուստի մոդելավորում» մասնագիտությամբ ուսանողների գեղարվեստաստեղծագործական աշխատանքի արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ախտորոշման մեխանիզմներն ու սոցիալ-մանկավարժական պայմանները՝ տեսագործնական դիտարկմամբ:
2. Ներկայացված է խնդրո առարկային վերաբերող մանկավարժական, մեթոդական և հոգեբանական գրականությունը, ինչպես նաև վերլուծվել է նոր տեխնոլոգիաների ներդրման սոցիալ-մանկավարժական պայմանները տվյալ ոլորտում: Բացի դրանից՝ հիմնավորվում է ինտեգրված ուսուցման արդյունավետությունը ԲՈՒՀ-երում «Հագուստի մոդելավորում» մասնագիտության դասընթացի շրջանակում:
3. Ուսումնասիրվել են ուսանողների գեղարվեստաստեղծագործական կարողությունների ձևավորման և զարգացման ապահովման սոցիալ-մանկավարժական պայմանները: Մեծ ուշադրություն է դարձվում գեղարվեստական գործունեության նկատմամբ ուսանողների հետաքրքրության առկայության բացահայտմանը և դրա ախտորոշմանն էմպիրիկ մակարդակում:

Հագուստի մոդելավորման սոցիալ-մշակութային գործոնները

Ժամանակակից հագուստը վաղուց դադարել է լինել պարզապես զգեստ, այսօր այն վերածվել է կենսակերպի և արժեքների արտացոլման միջոցի՝ դառնալով հետաքրքիր և բազմաշերտ ոլորտ: Նորաձևությունը հանդես է գալիս նաև որպես ազգային մտածողության դրսևորում՝ ապահովելով էթնոմշակութային երկխոսության հնարավորություն [3, էջ 69]:

Հագուստը, բավարարելով հասարակության կենսական պահանջները, միաժամանակ արտահայտում է նրա գեղագիտական պատկերացումները: Այն հանդիսանում է տվյալ ժամանակաշրջանի գաղափարների մարմնավորման միջոցներից մեկը և նախագծվում է համապատասխան ժամանակաշրջանի հիմնական գեղարվեստական ոճի ազդեցությամբ՝ հաշվի առնելով նորաձևության մասնավոր դրսևորումները: Արվեստը՝ որպես աշխարհընկալման գործոն, Վ. Ռ. Ռուխկյանի մեկնաբանությամբ՝ «մոդելը վերակառուցում է արվեստը որպես գեղարվեստական զգացմունքի, երևակայության և գիտակցության համադրություն, որպես սոցիալ-մշակութային գործոն» [2, էջ 18]:

Ազգային տարազի տարրերի համադրությամբ հագուստի մոդելավորման ժամանակակից նորաձևության միտումներն ու ուղղությունները ձևավորում են յուրահատուկ հարթակ, որտեղ իրականացվում է այդ գաղափարների հանրահռչակումը, զարգացումն ու տարածումը: Այս գործառույթը կրում են հագուստի մոդելավորման մասնագետները՝ մոդելավորողները:

Այսօր «Հագուստի մոդելավորում» մասնագիտության պատրաստմանն է ուղղված Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի ողջ մանկավարժական գործընթացը, որն ապահովում է ուսանողների համար մանկավարժական և սոցիալ-մշակութային արդյունավետ պայմաններ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական պատրաստվածությանը, լսարանների տեխնիկական հագեցվածությանը, ուսումնական ծրագրերի արդիականացմանը, ինչպես նաև մասնագետ-դասախոսների և ուսանողների մասնագիտական-լսարանային համագործակցությանը:

Այս համատեքստում կարևոր դեր ունի նաև ուսումնական գործընթացում նորագույն մեթոդների և միջոցների արդյունավետ կիրառումը, դասասենյակների հարմարավետ կահավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների (համակարգիչներ, տեսակապ, պրոյեկտորներ) ներգրավումը, ինչպես նաև լսարանային միջավայրի համապատասխանությունը՝ ըստ տեսագործնական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների:

Այս բոլոր մանկավարժական պայմաններն ու սկզբունքները նպաստում են հագուստի նախագծման հայեցակարգային դրույթների արդյունավետ

կիրառմանը՝ ապահովելով մասնագիտական բարձր պատրաստվածություն ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Հագուստի մոդելավորում» բաժնում:

Նկատենք նաև, որ մեր կողմից սահմանվել են հագուստի մոդելավորման տարրական, հիմքային, առաջադիմական և մասնագիտական մակարդակներ, ինչպես նաև մշակվել են ազգային տարազին համահունչ չափանիշներ և ցուցանիշներ: Փաստենք, որ «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մեթոդական համակարգն ունի հստակ ձևավորված նպատակներ և խնդիրներ, որոնք կանխորոշում են մանկավարժական գործընթացում ակնկալվող վերջնարդյունքները:

Հոդվածի **մեթոդաբանական հիմքեր են** հանդիսացել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, արվեստագիտական, մանկավարժական, մեթոդական հետազոտությունները, տեսությունները, հայեցակարգային մոտեցումները, գեղարվեստական նախագծումները, ինչպես նաև հայկական տարազի վարպետների փորձը, ուսումնական գործունեության պրակտիկան և տեսությունը: Այս համատեքստում կարևոր տեղ են զբաղեցնում այնպիսի հետազոտողների աշխատանքները, ինչպիսիք են Ն. Ավագյանը, Վ. Ռ. Ռուխկյանը, Վ. Վ. Սաֆոնովան, Վ. Դ. Շադրիկովը, Յու. Կավամուռան, Կ. Տեյլը, Մ. Շտիգլերը, ինչպես նաև դեկորատիվ-կիրառական արվեստի և գեղարվեստական նախագծման բնագավառի մասնագետներ Ա. Կ. Եղիազարյանը, Լ. Ս. Ներսիսյանը, Ա. Մ. Կարապետյանը:

Հետևաբար մանկավարժական գործընթացում այս մասնագիտության մեթոդաբանությունը խարսխվում է ուսանողի ստեղծագործական-պատկերավոր մտածողության, վերլուծական կարողությունների զարգացման և մշակութային տրանսմիսիայի վրա: Այս գործոնները հանդիսանում են մանկավարժական և սոցիալ-մշակութային արդյունավետ պայմաններ, որոնք խթանում են «Հագուստի մոդելավորում» մասնագիտության զարգացումը՝ ազգային տարազի համադրմամբ:

Հագուստի մշակույթը և նորաձևությունը ոչ միայն գեղարվեստական գործունեության ոլորտներ են, այլև ուղղված են անհատի **մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանը և զարգացմանը**: Այս գործընթացը իրականացվում է **արվեստի տարբեր ճյուղերի համադրության միջոցով**՝ հնարավորություն ընձեռելով անհատին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական գործունեություն ծավալելու և մասնագիտական ինքնաարտահայտման համար:

Հագուստի մոդելավորման գործառույթներից է ձևավորել անհատ, որը գիտակցում է սեփական մշակույթի՝ լեզվի, արվեստի, տարազի պատմության,

ավանդույթների և ազգային արժեքների կարևորությունը՝ դառնալով դրանց կրողը:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում **հետազոտական մեթոդաբանության և մեթոդիկայի զարգացումը**: Այդ մեթոդական հիմքերը դառնում են առավել էական, եթե հաշվի առնենք **գեղարվեստական մշակույթի մասին գիտությունների համեմատական վերլուծության անհրաժեշտությունը**՝ նպաստելով մասնագիտության խորացված ուսումնասիրությանն ու կատարելագործմանը:

Քննարկում: Ժամանակակից կրթությունը դիտարկվում է որպես մարդու, հասարակության և պետության զարգացման գործընթացում առաջընթաց ապահովող չափանիշային համակարգի առանցքային բաղադրիչ: Սոցիալ-տնտեսական և հասարակական փոփոխությունների համատեքստում ավելի ու ավելի է կարևորվում նոր աշխատաշուկային ինտեգրումը, տնտեսական զարգացման գլոբալ պահանջներին համապատասխանեցումը, ինչպես նաև կրթական համակարգի կատարելագործումը: Հատկապես կարևոր է կրթության որակի բարձրացումը, մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման գործընթացների ապահովումը:

Սոցիալ-մշակութային գլոբալացման շնորհիվ ազգային մշակութային արժեքները արագորեն տարածվում են՝ դառնալով համամարդկային արժեքներ և ձեռք բերելով փոխճանաչում [4, էջ 189]:

Մշակույթի հասարակայնացումը և նրա դերը ազգային ինքնության պահպանման գործում

Մշակույթի հասարակայնացումը մարդու կյանքի ընթացքում ձևավորվող նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է:

Նյութական մշակույթը կապվում է շրջապատող միջավայրի վերափոխման, աշխատանքի արդյունքների և այն ամենի հետ, ինչը նյութական հիմք ունի:

Հոգևոր մշակույթը մարդու ներաշխարհի փոփոխությունն է, որը դրսևորվում է արվեստում, բանահյուսության, կրոնի, գիտության և փիլիսոփայության ոլորտներում:

Մշակույթը ոչ միայն գործընթաց է, այլև տեղեկատվական յուրահատուկ համակարգ, որի միջոցով սոցիալական տեղեկատվությունը սերնդեսերունդ փոխանցվում է: Մշակույթը նաև խորհրդանշային բնույթ ունի. մարդու կողմից ստեղծված յուրաքանչյուր նյութական կամ հոգևոր տարր՝ իր, երևույթ, զգացում, կարող է դառնալ խորհրդանիշ:

Ձանգվածային մշակույթը և ազգային ինքնության պահպանման խնդիրները

Այսօր սոցիալ-մշակութային գործունեության արդյունքում ազգային ինքնության որոշակի խաթարում է նկատվում: Ազգային ինքնությունը ոչ միայն տվյալ ազգի հոգևոր կերպն է, այլև նրա ազգային-մշակութային անհատականության գիտակցումն ու ինքնատիպության համոզվածությունը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում սոցիալական փորձի, արժեքների հիմնական փոխանցողները տեղեկատվական աղբյուրներն են, որոնք հաճախ կարող են հակասել տվյալ էթնոսի հոգեկերտվածքին և ազգային ավանդույթներին:

Այս համատեքստում կարևոր է տարանջատել զանգվածային մշակույթը և ազգային մշակույթը:

Զանգվածային մշակույթը միջինացված ճաշակների, համահարթեցված հոգևոր պահանջմունքների կրողն է:

Ազգային մշակույթը ձևավորվում է տվյալ ազգի պատմական զարգացման ընթացքում՝ պահպանելով իր ինքնատիպությունն ու հոգևոր խորությունը:

Հայկական տարազը՝ որպես մշակութային ժառանգություն

Տարբեր պատմամշակութային ժամանակաշրջաններում գիտելիքները, արժեքները և ինքնության տարրերը սերնդեսերունդ փոխանցվել են հագուստի՝ տարազի միջոցով:

Հայկական տարազը ոչ միայն կրոնական, ծիսական և մշակութային խորհրդանիշների արտացոլանք է, այլև ազգային ինքնության, մտածողության ու ժառանգության պահպանման գործիք:

Հայկական մշակույթի պատմական զարգացումը ձևավորել է տարազային երկու հիմնական համալիրներ՝ արևմտահայկական տարազ և արևելահայկական տարազ, որոնցում արտահայտվել են սոցիալական, տոնածիսական, սեռատարիքային և մասնագիտական տարբերությունները: Տարազը հնարավորություն էր տալիս անմիջապես տարբերակել դրա կրողի սոցիալական խավը և մասնագիտությունը [1, էջ 14]:

Դեկորատիվ-կիրառական արվեստի և արհեստների դերը կրթական համակարգում

Սոցիալ-մանկավարժական և սոցիալ-մշակութային երևույթներն ունեն ճանաչողական և դաստիարակչական մեծ ներուժ, որը դրսևորվում է ազգային արվեստների ու արհեստների հիմքով:

Դեկորատիվ-կիրառական արվեստը, որի բաղկացուցիչ մասն է հագուստի մոդելավորումը, ձևավորվել է մարդու գործնական և գեղարվեստական պահանջմունքները բավարարելու նպատակով:

Ազգային արհեստները (գորգագործություն, ոսկերչություն, մետաղամշակում, արծաթագործություն) ոչ միայն զարգացնում են մասնագիտական հմտությունները, այլև նպաստում են անձնային որակների ձևավորմանը՝

- կազմակերպվածություն,
- նպատակաուղղվածություն,
- ճշտապահություն,
- դիտողականություն,
- երևակայություն,
- համագործակցային կարողություններ:

Այս առումով «Հագուստի մոդելավորում» մասնագիտության գիտատեսական հիմքերի ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի: Այն ներառում է սոցիալ-մշակութային գործունեության սկզբունքները՝

- հաջորդականություն,
- գիտականություն,
- ինտեգրման կարողություն,
- համակարգվածություն,
- մատչելիություն:

Սոցիալ-մշակութային գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև հայկական տարազի պահպանմամբ և մեր ինքնության արտացոլմամբ: Այն իր հարուստ և բազմաբնույթ մշակութային արժեքներով նպաստում է ինքնության պահպանմանը՝ իբրև ազգային մշակույթի առանցքային տարր:

Ազգային տարազի ուսումնասիրությունը «Հագուստի մոդելավորում» մասնագիտության շրջանակներում զարգացնում է ուսանողների առարկայական և պատկերավոր մտածողությունը:

Հագուստի մոդելավորումը պահանջում է

- գիտելիքներ,
- հիշողություն,
- պատկերավոր մտածողություն,
- երևակայություն:

Նորաձևության ստեղծումը հիմնված է հոգեբանական կարևոր մեխանիզմների վրա, որոնցից է վերափոխման (սուբստիտուցիայի) գործընթացը, որն առկա է ինչպես գիտակցության, այնպես էլ ենթագիտակցության մակարդակում:

Հագուստի մոդելավորման նախադրյալներն ու ժամանակակից մոտեցումները սոցիալ-մշակութային գործունեության շրջանակում հանգեցնում են հագուստի նախագծման հայեցակարգային դրույթների վերանայման անհրաժեշտությանը: Այս փոփոխությունների հիմքում դրվում են ազգային տարազի

առանձնահատկությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում մի քանի կարևոր ուղղություններով՝

- **իմացական մակարդակում՝** խթանելով մտավոր զարգացումը, զարգացնելով ստեղծագործական ունակությունները և տրամաբանական մտածողությունը (վերլուծում, համադրում, վերացարկում, զուգորդում):
- **գեղագիտական ընկալումների և ճաշակի ձևավորման գործընթացում՝** նպաստելով գեղեցիկի զգացողության զարգացմանը և դեկորատիվ-կիրառական արվեստին բնորոշ արժեքների ընկալմանը:

Ժամանակակից կրթական բարեփոխումները ենթադրում են ոչ միայն ուսումնական գործընթացի կատարելագործում, այլև սոցիալ-մշակութային կյանքի վերակառուցման արմատական փոփոխություններ: Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում կրթության և դաստիարակության համակարգի կապը արվեստի, իրավունքի, բարոյական նորմերի, գիտության, հասարակական և պետական հաստատությունների կազմակերպման մշակույթի հետ:

Վերջին տարիներին մեծ թվով հետազոտություններ են իրականացվում հայկական տարազի էթնոհոգեբանական առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ: Այս ուսումնասիրությունները կարևոր դեր են խաղում ազգային մշակույթի պահպանման, համաշխարհային մշակութային խառնաշփոթից ձերբազատման և միջազգային հանրության հետ ինտեգրման գործընթացներում:

Այս համատեքստում կարևորվում է նաև ուսուցման գործընթացում դասավանդման նորագույն մեթոդների, միջոցների արդյունավետ կիրառությունը, լսարանների հարմարավետ կահավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների (համակարգիչների, տեսակապի, պրոյեկտորների) կիրառումը, լսարանային միջավայրի համապատասխանությունը՝ ըստ տեսագործնական աշխատանքների կազմակերպման առանձնահատկության: Այս բոլոր մանկավարժական պայմաններն ու սկզբունքները ապահովում են հագուստի նախագծման հայեցակարգային դրույթների արդյունավետ կիրառությունը՝ ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Հագուստի մոդելավորում» բաժնում:

Այս առումով «Հագուստի մոդելավորում» մասնագիտության դասավանդման արդիականացումը պահանջում է նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում՝ նպատակ ունենալով խթանել ուսանողների գեղարվեստական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացումը: Բուհական կրթական համակարգում ինտեգրված մոտեցման կիրառումը կարող է նպաստել ուսանողների մասնագիտական առաջընթացին և ապահովել կրթության արդյունավետությունը:

Եզրակացություն

1. Պատմական ակնարկն ապացուցում է, որ գեղարվեստական կրթության կազմակերպման արդյունավետ ուղիների որոնումը և համապատասխան սոցիալ-մշակութային գործունեության զարգացումը (օրինակ՝ «Հագուստի մոդելավորում» ոլորտում) պայմանավորված է կրթական համակարգի շարունակական կատարելագործման անհրաժեշտությամբ:
2. Հոդվածում պատմագիտական, սոցիալ-մշակութային և մանկավարժական հիմնավորումների հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են հագուստի մոդելավորման՝ որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալները:
3. Ազգային տարազի հարուստ ժառանգության համադրումը ժամանակակից գեղարվեստական նախագծման մեթոդների և տեխնոլոգիաների հետ կարևոր նախապայման է հագուստի մոդելավորման ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար:
4. Սոցիալ-մշակութային համապատասխան պայմանների ապահովման պարագայում հնարավոր է կիրառել հագուստի մոդելավորման ուսուցման մշակված մեթոդիկան, որն ուղղված է դասընթացի տեխնոլոգիական և տեխնիկական հնարավորությունների առավել արդյունավետ իրացմանը:
5. Մեր առաջարկած «Հագուստի մոդելավորում» առարկայի ուսուցման մեթոդիկան ոչ միայն մատնանշում է դասընթացի տեխնոլոգիական և տեխնիկական հնարավորությունները, այլև սահմանում է ուսումնական գործընթացի հասանելի և կանխատեսելի արդյունքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավագյան Ն., Հայկական ժողովրդական տարազը (19-20 դդ. սկիզբ), Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1983, 110 էջ:
2. Ռուխկյան Վ. Ռ., Արվեստ - մարդ հաղորդակցման գեղարվեստա-մանկավարժական պայմանները, Երևան, «Զանգակ-97», 2005, էջ 18-25:
3. Тейл Л. К., Мода и текстиль, Рождение новых тенденций, Минск, 2009, 240 с.
4. Штиглер Маргарет, Кроллоп Луиза, Конструирование, Система кроя, М., Мюллер и сын. Издательский дом Эдипресс-конлига, Москва, том 1. 2004, с. 204.
5. Фридрих Готтенрот, Всеобщая история стиля и моды, Москва, Эксмо, 2009, стр 672.

PEDAGOGICAL AND SOCIO-CULTURAL CONDITIONS OF THE DEVELOPMENT OF THE PROFESSION "FASHION DESIGN"

MARONYAN HRIPSIME
Lecturer, ASPU,
e-mail: maronyanhr@gmail.com

In the modern world, a new generation of fashion designers combines traditional and modern elements of fashion, forming an important platform for intercultural communication and dialogue. This process contributes to the creation of new opportunities for the development of the profession, ensuring effective conditions for socio-cultural activity.

In the socio-cultural process, the success of the development, accumulation and preservation of existing traditions acquires special significance.

This is one of the most important conditions of pedagogy. Socio-cultural activity implies the processes of transmission and preservation from older generations to younger ones.

The process of cultural transmission implies the formation of a creative principle in a person, which will ensure the productive aspects of his vital activity. The concept of "social culture" means everything that is created by human labor, that is, tools and machines, technical means and scientific discoveries, literary monuments, religious systems, political theories, legal and moral norms.

Socio-cultural activity is initially associated with human activity and is explained by the fact that man has always sought to find the meaning of his life, the meaning of his activity.

This article is devoted to revealing the peculiarities of the profession "Fashion design", studying the pedagogical and socio-cultural conditions of its development. The aim of the article is to present the traditional and modern elements of the "Fashion design" complex course as a platform for intercultural communication and intergenerational dialogue.

Innovation - The use of various methods and technologies for the transfer of knowledge of artistic design and the development of performance techniques in the process of teaching "Fashion design" in the art education system stimulates the cognitive activity of students, their self-development, contributes to the development of their artistic thinking and activity.

Keywords *- modeling, fashion, socio-cultural, pedagogical conditions, history of clothing, culture, fabric, costume.*

ПЕДАГОГИЧЕСКИЕ И СОЦИОКУЛЬТУРНЫЕ УСЛОВИЯ РАЗВИТИЯ ПРОФЕССИИ «МОДЕЛИРОВАНИЕ ОДЕЖДЫ»

МАРОНЯН РИПСИМЕ
Преподаватель АГПУ
электронная почта: maronyanhr@gmail.com

В современном мире новое поколение дизайнеров одежды сочетает традиционные и современные элементы моды, формируя важную платформу для межкультурного общения и диалога. Этот процесс способствует созданию новых возможностей для развития профессии, обеспечению эффективных условий для социально-культурной деятельности.

В социокультурном процессе особое значение приобретает успешность развития, накопления и сохранения существующих традиций.

Это одно из важнейших условий педагогики. Социально-культурная деятельность подразумевает процессы передачи и сохранения от старших поколений к младшим.

Процесс культурной трансмиссии предполагает формирование в человеке творческого начала, которое обеспечит продуктивные стороны его жизнедеятельности. Понятие «социальная культура» означает все, что создано человеческим трудом, то есть орудия и машины, технические средства и научные открытия, литературные памятники, религиозные системы, политические теории, правовые и моральные нормы.

Социально-культурная деятельность изначально связана с деятельностью человека и объясняется тем, что человек всегда стремился найти смысл своей жизни, смысл своей деятельности.

Данная статья посвящена выявлению особенностей профессии «Моделиро-вание одежды» путем изучения педагогических и социокультурных условий ее развития. Цель статьи – представить традиционные и современные элементы комплексного курса «Моделирование одежды» как платформы для межкультурной коммуникации и межпоколенческого диалога.

Инновация - Использование различных методов и технологий передачи художественно-конструкторских знаний и освоения приемов исполнения в процессе обучения «Моделированию одежды» в системе художественного

образования стимулирует познавательную и познавательную активность обучающихся, их саморазвитие, и способствует развитию их художественного мышления и активности.

Ключевые слова *- моделирование, мода, социокультурные, педагогические условия, история одежды, культура, ткань, костюм.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 24.01.2025թ.:
Հոդվածը գրախոսվել է 12.02.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: